ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) գեղար-, հագուր-, հար-աշաղախ, կորնթար- **(ղ)**
2) առօր-ական, ելև-ջել, աշտ-ակիր, ոստր- **(ե)**
3) լռել-այն, քրիստոն-ա, ուխտադրու-ժ, բար-ացակամ **(յ)**
4) գեղ-ուկ, գաղ-, հաղար-, զեղ-ել **(ջ)**

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:**

1) բա-ադ, հե-են, մանրազ-ին, ու-ափառ
2) ֆի-ական, հո-ասուն, ք-ախույզ, այ-ենարան
3) ա-ահայր, ըն-իմակաց, երեսունե-որդ, անդո-ագիր
4) ի-սունինը, եր-ենցաղ, տա-ալուծել, վշտա-ուկ

3 **Ո՞ր շարքի բոլոր բաղադրյալ հատուկ անուններում է միայն մեկ բաղադրիչը գրվում մեծատառով:**

1) ՄԵԾ ԵՂԵՌՆ, ՀՈՒԼՅԱՆ ՏՈՄԱՐ, ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ԿՂԶԻ
2) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ, ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ՀԻՆ ՀՌՈՄ
3) ՆՈՐ ՏԱՐՎԱ ՏՈՆԵՐ, ՄԵԾԱՄՈՐԻ ԱՏՈՄԱԿԱՅԱՆ, ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՀԵՔԻԱԹԸ
4) ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ, ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉԻ ՇՔԱՆՇԱՆ, ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ԵՐԿՐՆԵՐ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:**

1) նկարակալ, շրջագայություն, զմրուխտյա
2) հստակություն, կապտել, թռչուն
3) թվարկություն, գրաշար, ձեռնամարտ
4) հնարամիտ, խոսակցական, վնասազերծել

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *յա* երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

1) ատենակալ, հյուլեական, մեհենական
2) սյունակավոր, մատենագիր, այժմեական
3) պատենավոր, միութենական, կատարելագործել
4) կենարար, գործունեություն, հեծելազոր

6 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) **հացի կարոտ** - ապրուստի միջոցներից զուրկ, **քոռ կոպեկ չտալ** - նյութական նվազագույն օգնություն ցույց չտալ
2) **կոտր ընկնել** - հակառակվել, **սրտում կրակ վառել** - ոգեշնչել
3) **ուղտը պոչով կուլ տալ** - գռփող լինել, **պղտոր ջրում ձուկ որսալ** - խառնաշփոթ վիճակից օգուտ քաղել
4) **հեքիաթներ պատմել** - ճիշտ չխոսել, **թևի տակ առնել**- նեցուկ կանգնել

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) մակնիշ, ջրմուղ, հավաքատեղ, որկրամոլ
2) կոճգամ, գրագետ, սնահավատ, ապշահար
3) անթացուպ, մարդատար, գովազդատու, բանասեր
4) թքագեղձ, սրախողխող, բանսարկու, ակնբախ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) վարդաջուր, գետնանուշ, դառնաթախիծ, սևումութ
2) քարածուխ, որմնախորշ, ազգամիջյան, ագեվազ
3) ջրագռավ, դրոշակակիր, դնչակալ, տարեվերջ
4) շրջակա, մենասահք, կարեվեր, դասալիք

9 **Ո՞ր տարբերակի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) իմաստակ-տգետ, մույթ-ոտնաման
2) շավիղ-արահետ, սրտաբեկ-վշտահար
3) անկապտելի-ամբարտավան, երկչոտ-վեհերոտ
4) արգանակ-ապուխտ, շեղջ-կույտ

10 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց կազմությունը ճիշտ է տրված:**

1. **անկայուն -** նախածանց+արմատ
2. **ապերասան -** նախածանց+արմատ
3. **քղանցք -** արմատ+արմատ+վերջածանց
4. **դասացուցակ-** արմատ+հոդակապ+արմատ
5. **անարգանք -** նախածանց+արմատ+վերջածանց

1) 2, 3, 5
2) 1, 3, 4
3) 2, 4, 5
4) 1, 2, 4

11 **Ո՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ *չկա:***

1) Նա չդիպավ աղքատիկ ճաշին, որ բերել էին իր համար, միայն վերցրեց խեցեղեն ամանը, խմեց ջուրը՝ փոքր-ինչ զովացնելու սրտի տապը:
2) Թորշոմած վարդերի թերթիկները, մեկիկ-մեկիկ պոկվելով, ընկնում էին վար:
3) Մշուշը սողալով լեռներից կիրճն էր իջել՝ թավալգլոր լցվելով ձորը:
4) Վարպետը սկսում է ինչ-որ բան գուշակել. նա լավ գիտեր որդու տաշած քարերը:

12 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ *չկա:***

1) Զրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը Ծով լռությա՜մբ, Համբերությա՜մբ:
2) Սրընթաց պախրա՞, թե՞ գայլ գիշատիչ Շեշտակի անցավ փարախի մոտով:
3) Այծյա՞մը հանկարծ մոտակա ժայռից Անդունդը մի քար գլորեց ոտքով:
4) Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց, Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:

13 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բայերի համարները, որոնք ներգործական սեռի են:**

Ես 1. լռեցի: Հայացքս 2. փախցրի նրանից: Նա դեմքը 3. մոտեցրեց ինձ, 4. գտավ իմ աչքերը և 5. վախվորած նայեց ուղիղ աչքերիս մեջ: Ոչինչ 6. ասել պետք չէր. նա իսկույն ամեն ինչ 7. հասկացավ: 8. Հառաչեց և թաշկինակի ծայրով 9. սրբեց թարթիչներից կախված արցունքի վերջին կաթիլները և այլևս ոչինչ 10. չխոսեց:

1) 2, 4, 5, 7, 9, 10
2) 1, 2, 3, 4, 8, 9
3) 1, 3, 4, 5, 7, 8
4) 2, 3, 4, 6, 7, 9, 10

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) թռչնաբույծ, սանր, կողաթև, միջնապատ
2) բնագիր, անվաղող, պահանջատեր, ուղեցույց
3) ցուցափայտ, երկրամաս, գետաձի, սեպագիր
4) ջրատար, կցակար, գորգեզր, սալաքար

15 **Ո՞ր շարքի բոլոր բառերի գործիական հոլովը կարող է կազմվել *բ*-ով:**

1) արյուն, կատաղություն, մաս
2) երդում, անկյուն, սյուն
3) իրավունք, կատարում, խիզախություն
4) խափանում, նորություն, անուն

16 **Ո՞ր տարբերակում դերբայական դարձված *չկա:***

1) Գնացքի շոգեկառքը զարդարել էին փողփողացող ալ դրոշներով:
2) Կամրջի վրայով անցնելիս աջուձախ չէր նայում:
3) Անհրաժեշտ էր մի քանի օրով գյուղ գնալ:
4) Մոտեցավ ու ջերմ բարևեց այգին մշակող այգեպանին:

17 **Ո՞ր նախադասության մեջ միջակետ *չի կարող* դրվել:**

1) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անծանոթ մարդ նրան նամակ հանձնեց:
2) Ծաղրածուի խոսքերը վաթսունամյա Լիր արքայի սրտում մտավախություն են ծնում մի՞թե կրտսեր դուստրն էլ է նման մյուսներին:
3) Ուրիշ ելք չունենալով հրացանները տեղադրեց տարբեր տեղերում տարբեր դիրքերից էր կրակելու ցույց տալու համար թե դեռ դիմադիր ուժեր կան:
4) Բայց այդ պահին մտածել սառը դատել անկարող էի բարկությունը նախանձն ու կատաղությունը տակնուվրա էին անում սիրտս:

18 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովն է նետել:*
   Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմող բանաստեղծի՝ իրեն ծովը նետելու մասին:
2) *Մայրս մինչև անգամ պարծեցավ, որ զավակն իր կամքով ուսումնարան է մտել:*
   Մայրս մինչև անգամ պարծեցավ իր կամքով ուսումնարան մտած զավակով:
3) *Ամենավտանգավորն այն սուտն է, որ քիչ է տարբերվում ճշմարտությունից:*
   Ամենավտանգավորը ստի՝ ճշմարտությունից քիչ տարբերվելն է:
4) *Հենց հորս փափախի սուր ծայրը չքացավ ճանապարհի փոշու մեջ, ինձ պաշարեց արտասովոր տրտմություն:*
   Հորս փափախի սուր ծայրը ճանապարհի փոշու մեջ չքանալուն պես ինձ պաշարեց արտասովոր տրտմություն:

19 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի շարահյուսական վերլուծության սխալ *չկա:***

Ծառերի՝ միմյանց ներհյուսված սաղարթները, ստեղծելով մի ամբողջական ծածկույթ, գիշերվա մթի մեջ նրանով անցնող ուղևորի համար անտառն ավելի սարսափազդու էին դարձրել:

1) **միմյանց** -հանգման խնդիր, **ուղևորի համար** -նպատակի պարագա
2) **նրանով**-տեղի պարագա, **մթի** -հատկացուցիչ
3) **սարսափազդու**-ուղիղ խնդիր, **սաղարթները** -ենթակա
4) **ներհյուսված** -որոշիչ, **ծածկույթ** -ուղիղ խնդիր

20 **Ո՞ր նախադասությանն է համապատասխանում տրված գծապատկերը:**



1) Արքան խոսում էր դանդաղ, բառերը ձգում, որպեսզի իր խոսքերը, որոնց ճշմարտությանը ինքը չէր կասկածում, երկար հնչեին օդի մեջ՝ համոզչությունը սաստկացնելու համար:
2) Հին կամրջի գերանները դողում են շյուղի նման, գետը ծանր քարեր է շպրտում կամարի հիմքերին, թվում է՝ զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի:
3) Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծխի մի սյուն տեսնելու, բայց թվում էր, թե մառախուղը դոպե առ դոպե նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշմարեց:
4) Հենց այդ ժամանակ լրացավ իմ յոթ տարին, սկսեցի հետաքրքրվել աստղային երկնքով, և բոլորը միանգամից գլխի ընկան, որ ես մեծ մարդ եմ դառնալու, որովհետև գիշերները նայում էի լեռան գագաթին, որի վրա ասես աստղեր էին թափվում:

21 **Ո՞ր տարբերակում հատկացուցիչ ստորադաս նախադասություն կա:**

1) Մեզ վաղուց էին պատմել նրա մասին, ով բազում քաջագործություններ էր կատարել և ազատել երկիրը թշնամիներից:
2) Մուշեղը մտավ նրանց արհեստանոցը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնական շուկայում:
3) Այս գավաթը նրան է պատկանում, ով հաղթանակ կտանի սրամարտում:
4) Սրտիս մեջ ծփում է ալիք առ ալիք Արյունը նրանց, որ ելել են սեգ, Գնում են դեպի կյանքը գալիք:

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ամենափոքրիկ վանքի բակում՝ հարավային պարսպի տակ գտնվող գետնախորշում, ..., այծենակաճի վրա թեք էր ընկել Ոսկանը:

1) մի ժամանակ ծառայելով որպես ցորենի մառան
2) մի ժամանակ որպես ցորենի մառան ծառայած
3) որ մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան
4) այն մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան

23 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Թեև շա՜տ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը, երգերն ու լռությունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին զրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ոգին:

1) փոխաբերություն
2) մակդիր
3) համեմատություն
4) շրջադասություն

24 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի:

1) «Հայոց լեռներում» (Հ. Թումանյան)
2) «Մի՞թե վերջին պոետն եմ ես» (Վ. Տերյան)
3) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ա. Իսահակյան)
4) «Վահագն» (Ե. Չարենց)

25 **Տրվածներից ո՞րը *չի* համապատասխանում Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի սյուժեին:**

1) Անուշը Սարոյի հետ փախչում է սարերը, հետո վերադառնում է հոր տուն:
2) Մոսին հետապնդում ու սպանում է Սարոյին:
3) Անուշը խելագարվում է և նետվելով Դեբեդի ալիքների մեջ՝ մահանում:
4) Աղբյուրից ուշ վերադառնալու համար մայրը պատժում է Անուշին և արգելում Սարոյի հետ հանդիպել:

26 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հայ մեծանուն գիտնականը գրել է. «Դրանք կուտակված բազմաթիվ մեծ և փոքր աստղեր են, որոնք աղոտ երևալու հետևանքով միավորված լույսով են երևում»:
2. Հազար տարի հետո միայն՝ 17-րդ դարում, Գալիլեո Գալիլեյը, աստղադիտակն ուղղելով երկնքի դեպի այդ տիրույթը, հաստատեց Շիրակացու առաջ քաշած միտքը:
3. 18-րդ դարից սկսվում է գալակտիկաների հայտնաբերման և ուսումնասիրման պատմությունը, և պարզվում է, որ Ծիր կաթինից բացի, որը մեր գալակտիկան է (Արեգակնային համակարգը գտնվում է նրա թևերից մեկում), գոյություն ունեն բազմաթիվ այլ գալակտիկաներ:
4. Երկնային մարմիններով, համաստեղություններով, երկնակամարի վրա մշուշոտ թույլ լույսով երևացող շերտով, որ մարդիկ Ծիր կաթին կամ Հարդագողի ճանապարհ են անվանել, գիտնականները վաղուց են հետաքրքրվել, և դեռևս 7-րդ դարում Անանիա Շիրակացին վերջինիս մասին մի ուշագրավ եզրակացություն է արել:

1) 3, 4, 1, 2
2) 4, 1, 2, 3
3) 4, 1, 3, 2
4) 3, 1, 2, 4

27 **Գ. Զոհրապի ո՞ր նովելից է տրված հատվածը:**

«Նշանտուքը Պատրիարքարանի մեծ դահլիճը կատարված չէր հարկավ … Պարզապես, հավիտյան իրար սիրելու խոսք տված էին, գիշեր մը, ծառի մը տակ՝ աստղերը ունենալով իրենց վկա. և աշխարհիս ամենեն մեծահանդես նշանտուքը եղած էր իրենցը»:

1) «Այինկա»
2) «Զաբուղոն»
3) «Փոստա՛լ»
4) «Այրին»

28 **Ո՞ր տողով է ավարտվում Մ. Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը:**

1) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
2) Ի՜նչ հեշտին է մընթնշաղն այս սատափե
3) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե
4) Նըվագն անոր կը հեծեծե հեշտական

29 **Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզգաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի ջրաքարում: Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր: Ավին մինչև վերջ էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ»:

1) «Մթնաձոր»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Սպիտակ ձին»

30 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Այս հիշատակարանն իմ ձեռքն ընկավ պատահական կերպով. թե ինչպես, հետաքրքրական չէ: Սա մի մեծ տետր էր, որի մեջ «կորած մարդը», ինչպես ինքն էր ենթավերնագրել իր հիշատակարանը, երկար տարիներ, համարյա թե օրը օրին գրի է անցրել իր անհատական կյանքի անցուդարձը»:

1) Ա. Շիրվանզադե. «Արտիստը»
2) Նար-Դոս. «Ես և նա»
3) Ա. Բակունց. «Խոնարհ աղջիկը»
4) Ա. Իսահակյան. «Սաադիի վերջին գարունը»

31 **Ո՞ր պնդումն է ճիշտ Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:**

1) Աղունի մայրացուն դեմ էր, որ Աղունը ամուսնանա Սիմոնի հետ:
2) Աղունը համաձայնում է ամուսնանալ Սիմոնի հետ այն բանից հետո, երբ իմանում է, որ իր հորաքույր Մանիշակի գյուղն է գնալու:
3) Ունևոր Իշխան հոր տնից Աղունը հարս էր եկել առանց օժիտի:
4) Սիմոնի ծնողները և հարազատները սկզբում մեծ խանդավառությամբ էին ընդունել Աղունին:

32 **Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին թարգմանել Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:**

1) Ժողովողի գիրքը
2) Սողոմոնի առակները
3) Ծննդոց գիրքը
4) Դավթի սաղմոսները

33 **Ո՞ր նախադասություններում զիջման պարագա կա:**

1. Եվ գուցե միայն սենյակում մի խուլ, Գլուխը թեքած պատկերիս վրա, Կնայի մի կին աչքերիս տխուր, Ու կարցունքոտվեն աչքերը նրա:
2. Քանի տարի էր, ինչ Թուրվանտա Քորոն և Փալանճի Գրիգորն ամուսնացած էին, բայց հակառակ բուռն ցանկության՝ զավակ չունեցան:
3. Քույրս դպրոցի լավագույն աշակերտուհին էր, իսկ ես, փոխանակ դասերս սովորելու, ժամանակս վատնում էի բակային խաղերի վրա:
4. Օդը, սակայն, այստեղ ցուրտ էր, գետինը՝ խոնավ, բուսականությունից զուրկ:
5. Ես, չնայած իմ անուղղելի լավատեսությանը, այստեղ զգում էի մի մեծ ու հորդաբուխ ուժի տագնապալի ազդեցությունը:

34 **Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:**

1. տարեշրջան, 2. թախծախառն, 3. աներևութանալ, 4. դստրիկ, 5. հանդգնել, 6. միջնագիծ, 7. տարագրություն, 8. գրչատուփ

35 **Ո՞ր բառերն են միմյանց հոմանիշ:**

1. խոնջանալ, 2. սեթևեթել, 3. խանդաղատել, 4. ծեքծեքել, 5. խանդավառվել, 6. պարուրել, 7. նազել, 8. պչրել

36 **Նախադասության անդամներից որո՞նց ձևաբանական վերլուծությունն է սխալ:**

Եթե զինվորների շողշողուն զենքերը չլինեին, հեռվից դիտողին կթվար, թե քարե դարի մարդիկ են հավաքվել սեղանի շուրջ:

1. **չլինեին** - անկանոն բայ
2. **շուրջ** - մակբայ
3. **կթվար** - չեզոք սեռի բայ
4. **դիտողին** - գոյական, որոշյալ առում
5. **մարդիկ** - ***ու*** հոլովման գոյական
6. **հավաքվել** - անորոշ դերբայ

37 **Ո՞ր նախադասություններում ընդգծվածը շաղկապ *չէ* (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ես ծնվել եմ երգի համար Ու **մինչև** մահ պիտի երգեմ:
2. **Նախքան** պատանու հարցին պատասխանելը նա ուղեպայուսակից հանեց զանազան ուտեստներ:
3. Ես պատմում եմ այն **ինչ** տեսել ու զգացել եմ սեփական փորձով:
4. Աղջիկը **որ** մազերն այդպես փռել էր ուսերին ուշադիր նայում էր փողոցի անկյունում խմբված մարդկանց:
5. **Քանի դեռ** ճրագը վառվում էր երրորդ մարդը աչքերը լաթով կապած նստած էր սենյակում:

38 **Ո՞ր թվերի տեղում ստորակետ պիտի դրվի:**

Բայց Բուդդան որի վարդապետության սկիզբը փառավոր է(1) միջուկը իմաստուն(2) և ավարտը փրկարար(3) կարեկցանքով լցված դեպի ամբոխի անհավատությունը(4) նորից դիմեց նրան(5) թշվառության և տանջանքի այդ տգետ ժառանգին: Նա բացեց ժողովրդի առաջ ճանապարհները դեպի Նիրվանան դեպի նրա երանավետ անդորրը սակայն(6) ամբոխը ծաղրում էր նրան: Եվ նա կանգնելով Հիմալայն ի վեր(7) ասաց Ով Ագնի լսիր իմ աղոթքը(8) և թույլ մի տուր որ թագավորի անհավատությունը:

39 **Տրված բառերից քանի՞սն են դերանուն:**

ոչ միայն, այսօրինակ, այստեղ, այսօր, մեկմեկի, որոշ, համայն, ուրեմն

40 **Բառերից (կապակցություններից) քանիսի՞ բաղադրիչներն են գրվում անջատ:**

մեջք(մեջքի), խոսքի(մասային), տնից(տուն), զառ(ի)վայր, ըստ(ամենայնի), հարյուր(մեկ), մեծ(մասամբ), ուր(որ)է

41 **Բառազույգերից քանիսի՞ բառերը հականիշներ *չեն:***

ցայգ-գիշեր, ի վնաս-հօգուտ, հակամետ-միտումնավոր, ճիշտ-թյուր, սեղմ-ճապաղ, վտիտ-մարմնեղ, պարպում-լիցքավորում, վատնել-կուտակել

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը գոյականական անդամի լրացում:**

- Կանայք՝ խարտյաշ կամ սևսաթ մազերով գեղեցկուհիներ՝ պճնված ճոխ <u>արդուզարդով</u>, ճեմում էին:
- Մղձավանջային <u>անհեթեթ</u> խաբկա՞նք էր, թե՞ դժոխային իրականություն:
- Գազանների մոտ հացի կնստեմ, ողջույնը կառնեմ <u>բորենիների</u>:
- <u>Անկասկածելի</u> թիվը նշեցե՛ք այն կանոնների, Ինչից մենք հաճախ հասունացել ենք:
- Ես կգամ որպես մոռացված մի երգ՝ <u>Հյուսված</u> աղոթքից, սիրուց ու ծաղկից:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ անջատման խնդիր *չկա:***

- Հեռացավ մեզանից տխուր, կարոտը սրտում:
- Նա բռունցքով ջարդեց այն, ինչ մնացել էր խաղալիքից:
- Ընչաքաղցությունից իրեն՝ տասնութամյա չնաշխարհիկ օրիորդին, ամուսնացրին տարեց մարդու հետ:
- Չինացիները խոսում են իրարից խիստ տարբեր յոթ բարբառներով, որոնք բոլորովին էլ հասկանալի չեն այլ բարբառով խոսողին:
- Մոտեցած երկնից աստղերը պայծառ Ժպտում են խաղաղ քո աչքերի պես:

44 **Նախադասություններից քանի՞սն են արևմտահայերենով:**

- Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշներու աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինծի:
- Հոս՝ քարահատակ ճամփուն վրա, ձիերու շարք մը կը քալե հազիվ լսելի ոտնաձայնով մը:
- Բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի, Անտես ու ստվերոտ սանդուխներու վրա Կ'իյնա շնչահեղձ:
- Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար, Եվ ալիք մը թևը բացած կը վազե:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Միևնույն բայը նույն նախադասության մեջ միաժամանակ կարող է ունենալ և՛ խնդիր, և՛ պարագա լրացումներ:
2. Պարագաները լինում են տեղի, ժամանակի, ձևի, միջոցի:
3. Ներգործող խնդիր կարող են ունենալ միայն ներգործական սեռի բայերը:
4. ***Պես*** կապով կարող են կազմվել թե՛ ձևի, թե՛ ժամանակի պարագաներ:
5. Պարագաները կարող են արտահայտվել միայն գոյականով կամ մակբայով:
6. Վերաբերության խնդիրը արտահայտվում է միայն կապային կառույցով:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Ջրտու-ի(1) գիշերներին լուսինը շող-(2) էր գցում առվի մեջ, ջրվորի պողպատ բահի վրա, պսպղում էին սերկ-իլի(3) տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խ-ում(4): Լուսաբացին հալվում էին աստղերը ձյան գնդերի պես, շա-ագունում(5) էր արևելքը, ա-րևի առաջին շողերը փայլփլում էին զուլալ, ականակի-(6) լճակներում, խաղում ամպե-րի հետ. ասես մի անտես ձեռք բ-ր(7) շողերով ամպի սպիտակ քուլաների վրա հազա-րավոր նա-շեր(8) էր նկարում, որ մի քիչ հետո ավերի նույն շողերով: Արևի շողերի հետ գոլո-շի(9) էր բարձրանում արտերից, ու գիշերվա խոնավությունն էր ան-անում(10):

1) 3-և, 4-շշ, 7-յու, 9-ր
2) 1-ք, 2-ք, 6-ր, 10-է
3) 2-կ, 7-յու, 8-խ, 10-է
4) 1-ք, 5-ռ, 8-ղ, 9-ր

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) խճանկար, դեռափթիթ, պարտիզպան
2) մշտավառ, վերնախավ, հոգեթրթիռ
3) ծածկանուն, ալրաղաց, համբուրել
4) նստակյաց, արյունռուշտ, բնաբան

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է ձայնավորը հնչյունափոխվել բաղաձայնի:**

1) հոգյակ, ձվածեղ, վայրկենասլաք, չվացուցակ
2) լեզվանի, կղզեբնակ, կատվաձագ, թթվահամ
3) աղվամազ, ալյակ, ուրվական, մեղվապահ
4) առվույտ, պատանյակ, առվեզր, կկվականչ

49 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) **մարմաջ**-բուռն ձգտում, **երախտիք**-ուրիշին արած բարի գործ
2) **քերծե**-արագավազ որսկան շուն, **տավիղ**-լարավոր երաժշտական գործիք
3) **վեղար**-հայ կրոնավորի գլխի ծածկույթ, **տորմիղ**-նավերի միավորում
4) **կռան**-մետաղները հարթեցնելու մուրճ, **ընձենի**-մշտադալար ծառի տեսակ

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են թավ գրված բառի բառաձևեր:**

1) **երգել** – երգած, երգելիս, երգիչ, երգի՛ր
2) **ինքը** – իրենք, նրա, իր, իրենց
3) **տուն** – տան, տնային, տներ, տունը
4) **հասնել** – հասել, հասնող, հասավ, պիտի հասնենք

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) աշակերտ, ակոս, ամբար
2) ավանդ, ակութ, անդուլ
3) աղանդ, ավազան, ավելուկ
4) ապար, ապստամբ, ախորժակ

52 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Ցոլակը նրա ձին էր՝ կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ:
2) Մի ահարկու ձայն խռպոտ աղմուկով խլացրեց զանգերի ղողանջը:
3) Մի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմը:
4) Սիմոնը մեխվել էր Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար:

53 **Տրված բառերից որի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *ընդ-* նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) առաջնորդ
2) մշտականաչ
3) օրինակելի
4) մրցունակ

54 **Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված ենթակա *չկա:***

1) Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
2) Աշխատանքի այդ խաղաղ օրերին այնպես էր թվում, թե սարերի ետևում ընկած գյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտի:
3) Դիլան դային գիտի, որ ինքը զառամյալ է արդեն, քայլելիս հենվում է փայտին:
4) Ամենազարմանալին այն էր, որ ոչինչ չէր փոխվել իմ մանկության գյուղում:

55 **Ո՞ր նախադասության մեջ մեկից ավելի անկանոն բայ կա:**

1) Ամպերը ճերմակ երամով անցան. իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:
2) Հետո կուշտ կերած մեր ձիերը սկսեցին բարձրանալ քարոտ արահետով՝ մեկը մյուսին հրմշտելով:
3) Նա հագել էր կապույտ բաճկոն, դրել էր գլխարկ, որի տակ հավաքել էր շեկլիկ մազերը:
4) Երազ տեսա. Սայաթ-Նովեն մոտս եկավ՝ սազը ձեռին:

56 **Ո՞ր տարբերակում գերադրական աստիճանով դրված ածական *չկա:***

1) Կյանքը մի սոսկալի արյունոտ կռիվ է, ուր երբեմն ամենահաղթ մարդն անգամ պարտվում է:
2) «Շոկոլադ» բառն առաջին անգամ Եվրոպայում լսել են իսպանացիները ացտեկների հնագույն մայրաքաղաքը թալանելիս:
3) Գրասեղանի մոտ նստել էր հայ երիտասարդության մտքի ամենասիրելի ղեկավարը՝ նա, որի անունը տարածված էր ամենուրեք, ուր կար գեթ մի բուռ հայություն:
4) Պատմության ամենից լուսաճաճանչ մտքի հնոցում ծնված հոմերոսյան պոեմները վերացած աշխարհի արձագանքն են հունական շողշողուն առասպելների տեսքով:

57 **Ո՞ր տարբերակում բաղադրյալ ժամանակաձև կա:**

1) միտք արեց, երգչուհի պիտի դառնամ
2) մի՛ վհատվիր, չպետք է ներես
3) երես մի՛ տուր, մոտ չեմ գա
4) պետք է գնամ, տարավ-բերեց

58 **Ո՞ր տարբերակում ըղձական եղանակի բայաձև կա:**

1) Շանթն է բեկվում ճակտիս վրա. Մահ, չգիտեմ, կա՞, թե՞ չկա:
2) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:
3) Երանի նրան, ով կարող է գեղեցիկ ստով խաբվել:
4) Եվ եթե դուք գաք մի օր այցի իմ շիրիմին, Կժպտա ձեզ իմ սրտից բուսած վարդենին:

59 **Ո՞ր նախադասության մեջ կապի գործածության կամ հոլովառության սխալ *չկա:***

1) Ձեր առաջարկների հետ դեռ չեմ հասցրել ծանոթանալ:
2) Նա իրեն համար հանգիստ կարդում էր, երբ հարևանը գրգռված ներս խուժեց ու սկսեց գոռգոռալ:
3) Հանձինս քեզ՝ ես ունեմ մի լավ բարեկամ:
4) Մեր մոտից մինչև ձեզ մոտ ոտքի ճանապարհ է:

60 **Ո՞ր բարդ նախադասության կազմում թերի նախադասություն *չկա:***

1) Բելը կանգնել էր զորքից բավական հեռու, իսկ Հայկը՝ առաջին շարքում:
2) Մայրիկ, մի բան պիտի ասեմ, որը քեզ գուցե կուրախացնի:
3) Անունս փաստաթղթերում չկար, որովհետև տունը կառուցելու ժամանակ ես դեռ չէի ծնվել:
4) Երեկոները, երբ մթնում էր, սովորաբար վառում էր բոլոր լույսերը:

61 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ժամանակի պարագա:**

1) Փարիզում կյանքը նոր իմաստ էր ստացել. **հիմա** նա վերջապես զգում էր ապրելու հրճվանքը:
2) **Դանդաղ** իջնում էր երեկոն:
3) **Հենց** վերջնական որոշում ընդունես, ինձ տեղյակ կպահես:
4) Հաջորդ տարի՝ **վաղ գարնանը,** ծիծեռնակը վերադարձավ:

62 **Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ *չկա:***

1) Նա փերին է զմրուխտ գետի, Ցնորքներիս սիրելին:
2) Ես մկրտվել եմ հայկական եկեղեցում, որի արմատները ձգվում են մինչև Թադևոս և Բարդուղիմեոս առաքյալները:
3) Մեր՝ երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից. ուշիուշով դիտում էինք արագիլներին:
4) Ճյուղերի միջից երկինքը երևում էր միայն երբեմն-երբեմն՝ ծառի՝ քամուց օրորվելիս:

63 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի:**

1) Պատուհանից տեսնում էի որ չորս ժամ է նա հետ ու առաջ է անում փողոցով:
2) Բաթը զայրույթից կորցրել էր իրեն և նրա բիբերը թվում էր ուզում էին դուրս պոռթկալ ակնակապիճներից:
3) Տղան կանչում էր հորը իսկ նա ձորն իջնելով այլևս չէր լսում որդու կանչը:
4) Որ նրանք հայ լինեն ես իմ հայությունից կհրաժարվեմ հայը հող կվարի ծառ կտնկի շալակով փայտ կբերի:

64 **Ո՞ր նախադասության մեջ բայի հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալ կա (շեշտերը դրված չեն):**

1) Երբ Գոգոն դժգոհում էր մեր ագարակի ծառերից պտուղ քաղողներից, մայրս գորովանքով ասում էր.
   - Թող մի քիչ էլ քաղեն տանեն, ձայն չհանես. դրանով մեր պտուղը չի պակասի:
2) - Հայրիկիդ կասեմ, որ թույլ տա՝ թռուցիկ թռցնես,- ասաց մայրս,- բայց այլևս թելը կտուրի ձողին չպիտի կապես:
3) - Բարեկամներս,- ասաց նիստը վարողը,- խնդրում եմ հարցերը տալ պարզ, որոշակի և տղամարդու պես տեր կանգնել տրված հարցին:
4) Նա մեքենան կանգնեցրեց ու ասաց.
   - Մեքենայիս մեջ շատ տեղ չկա. եթե ուզում ես, ճամպրուկներդ դիր, կտանեմ, կողովներիդ հետ դու ոտքով կգաս:

65 **Ո՞ր տարբերակի բոլոր բանաստեղծությունների հեղինակն է Վ. Տերյանը:**

1) «Ոսկեհանդերձ եկար», «Որպես Լաերտի որդին», «Տաղ անձնական»
2) «Աշնան մեղեդի», «Կարուսել», «Իմ խաղաղ երեկոն է հիմա»
3) «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի…», «Տխրություն», «Անվերնագիր»
4) «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Fatum», «Մի մրահոն աղջիկ տեսա»

66 **Ո՞ր տողը Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունից** ***չէ:***

1) Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում…
2) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր…
3) Արևոտ մի սար եմ հիշում՝ ճակատին ձյունի պատառիկ…
4) Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա…

67 **Ո՞ր նախադասություններում համաձայնության սխալ կա:**

1. Ամբողջ ժողովուրդը պապանձված կանգնել էին՝ ասես խլացած Բուդայի մահացու սպառնալիքների առաջ:
2. Հորս աչքերում կային հոգնությունը քողարկող ժպիտ և քնքշության ցոլքեր:
3. Գործող բոլոր կուսակցությունները ներկայացնելու են իրենց քաղաքական ծրագրերը:
4. Միացյալ Նահանգները փորձում է խաղաղություն հաստատել Մերձավոր Արևելքում:
5. Այս ամենը վկայում են, որ վերահսկողությունը պատշաճ մակարդակի վրա չի եղել:

68 **Ո՞ր նախադասություններում փոխանվանաբար գործածված թվական կա:**

1. Իսկ երկրորդները նրանք են, ովքեր կոչված են կյանքի խորհուրդն օրհներգելու:
2. Երբ Ավետիքը դառնում է յոթ-ութ տարեկան, ծնողները նրան տալիս են սովորելու գյուղի ուսումնարանում:
3. Այդ գիտնականը թարգմանություններ էր անում հարյուր տասնչորս լեզվից, վարժ խոսում էր երեսունինը լեզվով, մասնակի տիրապետում տասնմեկին:
4. Անհիշելի ժամանակներից սկսած՝ այդ գյուղում մշտապես ապրում էր հարյուր քսանյոթ մարդ. նրանցից քսանութը տղամարդիկ էին, մնացածը՝ կանայք ու երեխաներ:
5. Ե՛վ Չարենցը, և՛ Բակունցը հիացած էին Տերյանով. երկուսի համար էլ վերջինս կատարելատիպ էր, բանաստեղծական արվեստի չափանիշ:

69 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Հնավաճառից հինգ դոլարով գնված նկարը կարող է ամերիկացի նկարիչ Ջեքսոն Պոլլոքի կտավը լինել. ահա այսպիսի ենթադրություն է արել արվեստաբան Պիտեր Բիրոն: Եթե ենթադրությունը ճիշտ է, ապա կտավը արժի 40-50 միլիոն դոլար:

Վիճելի նկարի տերը նախկին վարորդ, այժմ թոշակառու Թերրի Հորթոնն է, որի ավտոտնակում նկարը մնացել է մի քանի տարի: Մի օր, երբ այն նկատել է տեղի համալսարանի պրոֆեսոր Բիրոն և ճանաչելով Պոլլոքի ոճը՝ ենթադրություն է արել, սկսվել է փորձաքննություն: Փորձագետները նկարի վրայի մատնահետքերը համադրել են Պոլլոքի արվեստանոցում եղած նկարներում առկա մատնահետքերի հետ, և ենթադրությունը առ այն, որ նախկին վարորդի մոտ գտնվող նկարը Պոլլոքի վրձնին է պատկանում, հաստատվել է: Արդյունքում յոթանասունչորսամյա թոշակառուն փաստորեն հսկայական կարողության տեր է: Չէ՞ որ ամերիկյան հետպատերազմյան խոշորագույն նկարիչներից մեկն է համարվում Պոլլոքը, որի հանրահայտ «Համար 5, 1948» կտավը, օրինակ, մասնավոր գործարքի արդյունքում վաճառվել է 140 միլիոն դոլարով. դա այն ժամանակներում գեղանկարչության մեջ վճարված գումարներից ամենախոշորներից է: Ավելի ուշ նկարչի մեկ այլ կտավ՝ «Համար 17Ա»-ն, վաճառվել է 200 միլիոն դոլարով:

Ջեքսոն Պոլլոքը ամերիկյան աբստրակտ էքսպրեսիոնիզմի ամենավառ ներկայացուցիչն է, հայտնի է ոչ միայն նկարների գաղափարական խորությամբ, այլև իր ստեղծած յուրահատուկ՝ ներկերը լցնելու և ցայտեցնելու տեխնիկայով: Բացի այդ, նա կտավը չէր ձգում ենթանկարակալի վրա, այլ գերադասում էր ամրացնել հատակին՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով նկարել չորս կողմից: Նա ասում էր, որ այդպես կարծես գտնվում է նկարի մեջ:

Նկարիչը անվանումներ չէր տալիս նկարներին, այլ սոսկ համարակալում էր դրանք՝ դիտողին իր նախանշած գաղափարներով չկաշկանդելու համար:

1. Թերրի Հորթոնին պատկանող նկարը իրականում շատ ավելին արժի հնավաճառին վճարված գումարից:
2. Կտավը հատակին ամրացնելու շնորհիվ Պոլլոքը կարողանում էր նկարել կտավի բոլոր կողմերից:
3. Պոլլոքի նկարների բարձր գինը կապված է ոչ թե դրանց բովանդակության, այլ ներկերը ցայտեցնելու միջոցով նկարելու տեխնիկայի հետ:
4. Համալսարանի պրոֆեսորը, նկարի վրա նկատելով հայտնի նկարչի մատնահետքերը, պարզել է, որ կտավը պատկանում է Ջեքսոն Պոլլոքի վրձնին:
5. «Համար 5, 1948» հայտնի կտավը տարիներ շարունակ մնացել է մի նախկին վարորդի ավտոտնակում:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Առաջ, հետու*** բառերը կարող են հանդես գալ և՛ որպես կապ, և՛ որպես մակբայ:
2. ***Որեն, ովին*** ածանցները կազմում են մակբայներ:
3. Մակբայները դառնում են ոչ միայն բայով, այլև ածականով արտահայտված անդամի լրացում:
4. ***Երբևէ, երբևիցե*** բառերը ժամանակի մակբայներ են, ***բազմիցս, կրկնակի*** բառերը՝ չափի մակբայներ:
5. Մակբայը չի կարող լինել կազմությամբ պարզ բառ:
6. Գոյականի կրկնությամբ կազմված որոշ բառեր մակբայներ են: